ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 11.09.20թ. հարցման կարգով անցկացված թիվ 1.20-21 նիստի

Նիստին մասնակցել են գիտական խորհրդի 36 անդամներից 25-ը:

Նիստի օրակարգը՝

1. Թեմատիկ ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների 2018 թ.-ի մրցույթում հաղթող թեմաների հաշվետվություններ:

Գիտխորհրդի անդամներին ուղարկվել են ֆակուլտետում իրականացվող հետևյալ 5 նախագծերի տարեկան հաշվետվությունները.

1. "Ուժեղ տերահերցային ճառագայթման ազդեցությունը քվանտային կետերով արհեստական գրաֆենանման գերցանցերի բնութագրերի վրա " , ղեկավար՝ Մ.Գ. Բարսեղյան:
2. "Դասական համակարգերի նկատմամբ ունիվերսալ ֆունկցիաներ ", ղեկավար՝ Մ.Գ. Գրիգորյան,
3. "Միզանյութի ազդեցությամբ պայմանավորված մարդու թելոմերային ԴՆԹ-ի կոնֆորմացիոն անցումները " , ղեկավար՝ Ե.Բ. Դալյան,
4. "Ֆոնոններով միջնորդված սպինային ռելաքսացիայի փականային կառավարումը գրաֆենում տակդիրով մակածված սպին-ուղեծրային փոխազդեցության միջոցով", ղեկավար՝ Ա.Լ. Վարդանյան,
5. "Տոպոլոգիայով և սահմաններով մակածված երևույթներ կոսմոլոգիական մոդելներում", ղեկավար՝ Ա.Ս. Քոթանջյան:

Հարցմանը մասնակցած բոլոր գիտխորհրդի անդամները կողմ են արտահայտվել վերը նշված բոլոր հաշվետվությունները ընդունելուն:

Որոշեցին՝ Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում նախագծերի շրջանակներում ստացված արդյունքները՝ ընդունել վերը թվարկված բոլոր տարեկան հաշվետվությունները:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝ Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝ Գ. Հ. Հովհաննիսյան